ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Տնօրեն՝ Վ. Հ. Գալոյան

Digitally signed by GALOYAN VARDUHI
7705800268
Date: 2022.09.13 13:54:46 GMT+04:00

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

<<ՀՀ Գեղարքունիքի մարզի Հայրավանք գյուղի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ

Հինգերորդ դասարան

ուսումնական հաստատության անվանումը , դասարան

Մաղաքյան Սիրամարգ Մերուժանի

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

«2022- 2023» ուսումնական տարի

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ(դասարանի ընդհանուր բնութագիրը)

2021-2022 ուստարում Հայրավանքի միջնակարգ դպրոցի 5-րդ դասարանում սովորում են 16(տասնվեց) աշակերտներ՝ 11 տղա, 5 աղջիկ: Աշակերտներից չորսը անցած ուսումնական տարին ավարտել են գերազանց առաջադիմությամբ: Դասարանում բոլոր աշակերտները համախմբված են, ընկերասեր, պատրաստակամորեն կատարում են դասղեկի և դասավանդող ուսուցիչների հանձնարարությունները: Աշակերտները խնամքով են վերաբերվում դպրոցի գույքին, հետևում են դասասենյակի մաքրությանը:

2. Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում

- Հետևել աշակերտների հաճախելիությանը, աշակերտների կարգապահությանը:
- Ապահովել կրթական ծրագրերի կատարումը՝ հանրակրթական պետական չափորոշիչներին համապատասխան:
- Կրթության գործընթացում դասարանական կոլոկտիվի փոխհարաբերությունների վերլուծություն, համակարգում, կարգավորում:
- Դասարանական կոլեկտիվի կենսագործունեության փուլերի (քառորդ, կիսամյակ) և միջոցառումների պլանավորում, նախապատ-րաստում, իրականացում, արդյունքների ամփոփում, վերլուծություն (դասղեկական ժամեր, տեղեկատվական ճեպազրույցներ, ստեղծագործական միջոցառումներ և այլն):
- Աշխատել առարկայական ուսուցիչների հետ՝ սովորողների առաջադիմության բարձրացման ուղղությամբ:

3.ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3. 1 Հոգևոր դաստիարակություն Յուրաքանչյուր աշակերտի համար կարևոր է հայեցի դաստիարակությունը: Աշակերտի մոտ պետք է ձևավորել այն գիտակցումը, որ ինքն է հայ մշակույթի և լեզվի կրողն ու փոխանցողը, քրիստոնեական արժեհամակարգի անխախտ հետևորդը: Նախատեսվում է բացատրական զրույցների և էքսկուրսիաների միջոցով ձևավորել կայուն և դրական աշխարհայացք հոգևոր ոլորտի նկատմամբ: Հայը պետք է մշտապես զգոն լինի, լինի ամուր հոգով ու հավատով, քանի որ անգամ այժմ մենք գտնվում ենք թշնամու մշտական հարձակումների ներքո:

3.2 Գեղագիտական դաստիարակություն Գեղագիտական դաստիարակության համար նախատեսվում է կազմակերպել այցելություններ մշակութային օջախներ, հատկապես թատրոններ և պատկերասրահներ: Գեղագիտական ճաշակի ձևավորման հարցում կարևոր է նաև ընթերցասիրության խթանումը և խրախուսումը: Նաև դասղեկի ժամերին նախատեսվում են տեսաներկայացումների ցուցադրություններ համաշխարհային մշակույթի և հայ մշակույթի երևելի անձանց կյանքի և գործունեության մասին:

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն Նախատեսվում են տարաբնույթ զրույցներ ինչպես դասղեկի ժամերին, այնպես էլ դասապրոցեսի ընթացքում: Ռազմահայրենասիրական դաստիարակության հարցում կարևոր է նվիրյալ հայորդիների կյանքի և գործի ուսումնասիրումը, դավանած գաղափարներին հետևելը: Նրանց օրինակով և ոգով պետք է ոգևորել ու խրախուսել աշակերտներին:

3.4 ֆիզիկական դաստիարակություն Պարբերաբար անցկացնել քննարկումներ անձնական հիգիենային և առողջ ապրելակերպին նվիրված: Պահանջել և լինել հետևողական, որ աշակերտները լինեն պահանջկոտ սեփական անձի նկատմամբ՝ ֆիզիկական պատրաստվածության տեսանկյունից:

3.5 Աշխատանքային դաստիարակություն Արթնացնել սեր, հարգանք, ճիշտ վերաբերմունք շրջակա միջավայրի, ազգային ունեցվածքի նկատմամբ: Սերմանել հոգատար վերաբերմունք դպրոցամերձ տարածքի, դասարանի գույքի հանդեպ, բարձրացնել աշակերտների բարոյակամային որակները:

3.6 Բնապահպանական դաստիարակություն Աշակերտների մոտ ձևավորել սրտացավ վերաբերմունք բնության նկատմամբ: Պատեհ բոլոր առիթների դեպքում աշակերտներին ծանոթացնել առկա բնապահպանական խնդիրներին:

3.7 Դպրոց-ընտանիք կապը Մշտական կապի և փոխհամագործակցության մեջ լինել ծնողների հետ՝ ի նպաստ աշակերտների: Սահմանված ժամկետներում անցկացնել ծնողական ժողովներ: Նպաստել ծնողների անընդմեջ վերահսկողության բարձրացմանը, քանի որ նրանք պետք է միշտ հետևողական լինեն երեխաների ուսման ու կարգապահության նկատմամբ :

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն	Կատարողներ
01.09 05.09-09.09	Գիտելիքի և դպրության օր: Ձևավորել կազմակերպչական անկյուն, ընտրել դասարանի ակտիվ	Դասղեկ աշակերտներ
12.09-16.09	«Ո՞Վ եմ ես: Ինչպիսի՞ն եմ ես» զրույց -քննարկում	Դասղեկ աշակերտներ
19.09-23.09	Զրույց նվիրված Հայաստանի անկախության օրվան: «Ես քաղաքացին եմ ողջ աշխարհի»	Դասղեկ աշակերտներ
29.09-30.09	«Աշակերտի իրավունքներն ու պարտականությունները»: Աշակերտներին ներկայացնել իրենց իրավունքներն ու պարտականությունները և կարևորել դրանց հետևելը:	Դասղեկ աշակերտներ
03.10-07.10	Զրույց «Իմ ոգեշնչման աղբյուրն իմ ուսուցիչն է» թեմայով	Դասղեկ աշակերտներ
10.10-14.10	«Շփման ձևեր և միջոցներ»: Սովորեցնել ճիշտ հաղորդակցվել՝ տարբերելով բարեկիրթ և անբարեկիրթ խոսքը, կարևորել դասերին և դասամիջոցներին իրենց ճիշտ պահվածքը:	Դասղեկ աշակերտներ
17.10-21.10	«Լույսի և բարու սերմնացաններ»: Զրուցել բարության և դրա ուժի մասին:	Դասղեկ աշակերտներ
31.10-04.11	Անկեղծ ու ազնիվ հարաբերություններ մեր դասարանում	Դասղեկ աշակերտ.

07.11-11.11	«Իմ տարածաշրջանը, իմ գյուղը և նրա պատմությունը»: Զրուցել գյուղի պատմամշակութային վայրերի մասին:	Դասղեկ աշակերտներ
14.11-18.11	Զրույց «Մարդիկ, որոնց կուզեի ես նմանվել»	Դասղեկ աշակերտներ
21.11-25.11	Մեր վատ սովորությունները և պայքարը դրանց դեմ	Դասղեկ աշակերտներ
28.11-02.12	Զրույց- քննարկում «Համակարգիչն ընկեր է, թե՞ թշնամի»	Դասղեկ աշակերտներ
05.12-09.12	Բնական աղետներ՝ անվտանգության կանոնները պահպանելու կարողություն	Դասղեկ աշակերտներ
12.12-16.12	«Ամանորը մեզ մոտ և տարբեր երկրներում»: Հստակեցնել ազգային տոների նշանակությունը, առանձնահատկությունները:	Դասղեկ աշակերտներ
19.12-23.12	Առաջին կիսամյակի ամփոփում: Վերլուծել և ամփոփել ուսումնական տարվա առաջին կիսամյակը, ձեռքբերումները և բացթողումները:	Դասղեկ աշակերտներ
09.01-13.01	«Ես և ուրիշները» զրույց -քննարկում	Դասղեկ աշակերտներ
16.01-20.01	Անցկացնել զրույց նվիրված «Հայոց բանակի օրվան»	Դասղեկ աշակերտներ
23.01-27.01	«Ինչ է ինձ համար դպրոցը,կրթությունը » Զրուցել դպրոցի,կրթության կարևորության մասին:	Դասղեկ աշակերտներ
30.01-03.02	«Մեզ պետք են տարբերություններ» զրույց- քննարկում	Դասղեկ աշակերտներ
06.02-10.02	Հայկական ավանդական տոները: Զրույց «Տեառնընդառաջ» թեմայով	Դասղեկ աշակերտներ
13.02-17.02	«Բոլորս տարբեր ենք, բոլորս ապրում ենք միասին» զրույց- քննարկում	Դասղեկ աշակերտներ
20.02-24.02	«Դռները բացե՛ք, գարուն է գալիս»: Գարունը բանաստեղծություններում և երգերում	Դասղեկ աշակերտներ
27.02-03.03	Կանանց միջազգային օրը տարբեր երկրներում	Դասղեկ աշակերտներ
06.03-10.03	«Բոլորս տարբեր ենք, և դա մեր հարստությունն է» զրույց- քննարկում	Դասղեկ աշակերտներ
13.03-17.03	Ապրիլի մեկը ծիծաղի օրն է: Ծիծաղաշարժ պատմությունների քննարկում	Դասղեկ

		աշակերտներ
20.03-24.03	«Բոլորս տարբեր ենք, բոլորս հավասարապես արժանի ենք հարգանքի»	Դասղեկ աշակերտներ
03.04-07.04	Ավետման տոն, մայրության և գեղեցկության տոնի առթիվ անակնկալ մայրերին	Դասղեկ աշակերտներ
10.04-14.04	«Մարդ ում մասին կուզեի ամեն ինչ իմանալ»	Դասղեկ աշակերտներ
17.04-21.04	«Օտար լեզուների դերը մեր կյանքում» թեմայի քննարկում	Դասղեկ աշակերտներ
24.04-28.04	Զրույց-քննարկում «Ոչ ոք չի մոռացվել, ոչինչ չի մոռացվել» թեմայով	Դասղեկ աշակերտներ
01.05-05.05	«Մայիսի 1՝ աշխատանքի և աշխատավորների միջազգային օր» զրույց- քննարկում	Դասղեկ աշակերտներ
08.05-12.05	Մեր պատմության հերոսական էջերը	Դասղեկ աշակերտներ
15.05-19.05	Զրույց «Իմ ապագան ես տեսնում եմ հայրենիքում»	Դասղեկ աշակերտներ
22.05-26.05	«Ինչ տվեց ինձ այս ուսումնական տարին» Ամփոփել ուսումնական տարին, ամառային արձակուրդներին հանձնարարել գրքեր կարդալ՝ համագործակցելով «Մայրենի» առարկայի ուսուցչի հետ։	Դասղեկ աշակերտներ